սկսան տալ ածել 'ի ներքոյ սեան, յորոյ վերայ է խաչելութեան մեծ պատկերն Հայոց՝ հանդէպ Գերեզմանին. 'ի հարցանել միաբանաց զպատճառն՝ ցուցանեն զհրաման մեծաւորի իւրեանց. և իբրեւ ոչ կարացին արգելուլ ըզնոսա անտի՝ գնացին մաքրել զդուռն Գերեզմանին եւ զվարագոյրս նոցա, ընդ որ ցասուցեալ Լատինաց՝ ածին սանդուխս և մաքրեցին զսիւնն 'ի վերուստ մինչ 'ի վայր, եւ յընդդիմանալն Հայոց՝ սպառնացան նոցա բրօք, բայց նոքա չունէին զայնպիսի հրաման 'ի մեծաւորէն իւրեանց, և խոնարհեցին զգլուխս եւ մռնչեալ մեկնեցան 'ի տեղւոջէ անտի, Հայք համբերութեամբ տանէին այսոցիկ, զի աւարտեսցի գործ Բեթղեհէմի, բայց և այնպէս աղդարարին Դատաւորին առանձին, և նա քաջալերէր զնոսա չերկնչիլ, այլ համբերել սակաւ ինչ. և 'ի գիշերին յայնմիկ զարձեալ գնացին առ նա Դիոնէսիոս եւ Կարապետ վարդապետք, կարդաւ պատմել զինդիրն եւ խելամուտ առնել զնա, և չխաբիլ 'ի բանս Բաղաքապետին։ Եւ նա յորդորեաց զնոսա չհոգալ, զի պատուէր ունիմ ասէր 'ի մեծամեծաց Տէրութեան տալ հաստատութիւն գործոց Նուրեայ և հոգամ զգործս ձեր, բայց ծածկաբար աղդարարէք ինձ։ Լատինք ոչ դադարէին 'ի յանդգնութենէ իւրեանց 'ի Բեթղեհէմ և 'ի Ս. Յարութիւն, և խորհրդով Բաղաքապետին բողոք բարձին զՀայոց վասն Խաչելութեան պատկերին, և նա իբր յանգէաս առաքեաց զԳանձապետ իւր առ Հայս զանց առնել զինդրովն՝ ցուցանելով զդողոքն Լատինաց, և թէ նոքա ոչ են իբրեւ զՀայս լսող բանից, այլ բիրտ եւ յանդուգն. ուստի պարտ է դադարիլ 'ի խնդրոյն մինչեւ դտանել զհնարն։ Հայք արարին նմա պատասխանի՝ թէ սիւնն այն սեփհական է Հայոց, որպէս յայտ առնեն պատկերն և կանթեղն, նոյնպէս մաքրել և սրբելն, Լատինք երբէք չունին իրաւունս ձեռն մտել 'ի նա, զի նոքա դիտմամբ յարուցին զայս խնդիր և խառնեցին ընդ խնդրոյն Բեթղեհէմի, զի 'ի դատաստանի գոնէ զմին չահեսցին, բայց և այս յայտնի լիցի. Լատինք ոչ կարէին յանչափս ձգտիլ, եթէ ոչէին լեալ նոցա զօրավիդ գլխաւորք քաղաքիս։ Եւ 'ի պատմելն զայսոսիկ պատգամաւորին՝ նա ասէ՝ Լատինք ասեն՝ թէ յայնժամ խաբեաց զմեզ Մու-